# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Մեծավան, (093)024287, metsavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 58-Ա

## ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Մեծավան համայնքի ավագանու 2021թվականի սեպտեմբերի 9-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից վարձակալության իրավունքով տրամադրելու մասին
3. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին
4. Հողատեսքի նպատակային նշանակությունը փոփոխելուն համաձայնություն տալու մասին
5. «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» (ՀՀՏԶ) նախաձեռնությանը Մեծավան համայնքի անդամակցությունը վերահաստատելու մասին
6. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդ վաճառքով օտարելու մասին
7. «Մեծավանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» 2019 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 56-Ա որոշման N2 հավելվածում փոփոխություն կատարելու մասին
8. «ՀՀ Լոռու մարզի Մեծավանի «Մշակույթի կենտրոն» բյուջետային հիմնարկի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» 2019 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 58-Ա որոշման հավելվածում փոփոխություն կատարելու մասին

9. ՀՀ Լոռու մարզի «Մեծավանի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքին մոտիկ գտնվող ծառերը կտրելու մասին
10. Մեծավան համայնքի 2021թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին
11. «Հայանտառ» ՊՈԱԿ-ին խնդրանքով դիմելու մասին

| | Կողմ -10 | Դեմ -0 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|---|
| ԲԱՂՈՅԱՆ ՄԱՐՏԻԿ | | | |
| ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ | | | |
| ԳՁԻՐԱՆՑ ԷԼԼԱ | | | |
| ԴԻԼԲԱՐՅԱՆ ԷԴԻԿ | | | |
| ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | | | |
| ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ | | | |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԶԱՎԵՆ | | | |
| ՍՈԼՈՅԱՆ ԱՐԱՐԱՏ | | | |
| ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ | | | |
| ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Մեծավան, (093)024287, metsavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 59-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286-ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը, Մեծավան համայնքի ավագանին՝

**ՈՐՈՇՈՒՄ Է.**

1.Տալ համաձայնություն Մեծավան համայնքի վարչական տարածքում՝ Ձյունաշող գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի 06-064-0102-0058 ծածկագրով 3,33հա խոտհարք, տարեկան վարձավճարի մեկնարկային գինը 23310 ՀՀ դրամ, 06-064-102-072 ծածկագրով 2,958հա խոտհարք, տարեկան վարձավճարի մեկնարկային գինը 20706 ՀՀ դրամ, 06-064-102-005 ծածկագրով 5,13հա խոտհարք, տարեկան վարձավճարի մեկնարկային գինը 35910 ՀՀ դրամ, 06-064-102-009 ծածկագրով 2,882հա խոտհարք,տարեկան վարձավճարի մեկնարկային գինը 20174 ՀՀ դրամ, 06-064-0102-0082 ծածկագրով 1,974հա խոտհարք, տարեկան վարձավճարի մեկնարկային գինը 13818 ՀՀ դրամ, 06-064-0102-0089 ծածկագրով 1,0147հա խոտհարք, տարեկան վարձավճարի մեկնարկային գինը 7098 ՀՀ դրամ, 06-064-0102-0004 ծածկագրով 4,762հա խոտհարք, տարեկան վարձավճարի մեկնարկային գինը 33334 ՀՀ դրամ, 06-064-104-004 ծածկագրով 3,01հա խոտհարք, տարեկան վարձավճարի մեկնարկային գինը 21070 ՀՀ դրամ, Մեծավան գյուղում գտնվող 06-074-0203-0094 ծածկագրով 42.532հա 4-րդ կարգի վարելահող, տարեկան վարձավճարի մեկնարկային գինը 213000 ՀՀ դրամ, 10 տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել վարձակալության:

2. Մրցույթի մասնակցության վճարը 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել վարձակալության իրավունքով տրամադրվող

հողամասի հայտարարության հրապարակային ծանուցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

| | Կողմ -10 | Դեմ -0 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|---|
| ԲԱՂՈՅԱՆ ՄԱՐՏԻԿ | | | |
| ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ | | | |
| ԳԶԻՐԱՆՑ ԷԼԼԱ | | | |
| ԴԻԼԲԱՐՅԱՆ ԷԴԻԿ | | | |
| ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | | | |
| ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ | | | |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՋԱՎԵՆ | | | |
| ՍՈԼՈՅԱՆ ԱՐԱՐԱՏ | | | |
| ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ | | | |
| ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Մեծավան, (093)024287, metsavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 60-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածին, Մեծավան համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 46-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| | Կողմ -10 | Դեմ -0 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|---|
| ԲԱՂՈՅԱՆ ՄԱՐՏԻԿ | [signature] | | |
| ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ | [signature] | | |
| ԳԶԻՐԱՆՑ ԷԼԼԱ | [signature] | | |
| ԴԻԼԲԱՐՅԱՆ ԷԴԻԿ | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | | | |
| ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ | | | |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՋԱՎԵՆ | | | |
| ՍՈԼՈՅԱՆ ԱՐԱՐԱՏ | | | |
| ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ | | | |
| ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնքի ավագանու
2021թվականի սեպտեմբերի 9-ի 60-Ա որոշման

1. Սարգսյան Վարդուհի Արեստակի-100,0 հազար ՀՀ դրամ/սոց. օգնություն/
2. Փեթակչյան Արև Արարատի-100,0 հազար ՀՀ դրամ/սոց. օգնություն/
3. Մովսիսյան Լիլիթ Գարիկի-40,0 հազար ՀՀ դրամ/ուսման վարձ/
4. Յավրումյան Ռազմիկ Էդիկի-40,0 հազար ՀՀ դրամ/ուսման վարձ/
5. Մարկոսյան Ռազմիկ Սամսոնի-40,0 հազար ՀՀ դրամ/ուսման վարձ/
6. Քոչարյան Լևոն Վիլսոնի-40,0 հազար ՀՀ դրամ/ուսման վարձ/
7. Թմոյան Գայանե Էդգարի-40,0 հազար ՀՀ դրամ/ուսման վարձ/
8. Անախասյան Նարե Կարենի-40,0 հազար ՀՀ դրամ/ուսման վարձ/
9. Գրեյան Աիդա Յուրիկի-50,0 հազար ՀՀ դրամ/հարազատի հուղարկավորություն/
10. Հարությունյան Գայանե Ավետիքի-50,0 հազար ՀՀ դրամ/հարազատի հուղարկավորություն/

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ. ՔԱՉԱԿՈՒԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Մեծավան, (093)024287, metsavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 61-Ա

## ՀՈՂԱՏԵՍՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 23.07.2015թվականի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն 09.08.2001 թվականի թիվ 1032-ն և 02.04.2012 թ թիվ 412-ն որոշումներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարների առաջարկությունը՝ Մեծավան համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է.**

1. Տալ համաձայնություն ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնքի Միխայլովկա գյուղում Հովհանես Խորենի Քարթունյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության՝ վարելահողեր և այլ հողատեսք գործառնական նշանակության 06-077-0129-0003, 06-077-0129-0009 ծածկագրով առանձնացված 1.2996հա ընդհանուր մակերեսով հողամատեսք /0.849հա մակերեսով հողամասը որպես վարելահող, իսկ 0.4506հա մակերեսով հողամասը՝ այլ հողատեսք գործառնական նշանակության/ հասարակական սպասարկման օբյեկտների կառուցման նպատակով գյուղատնտեսական հողերից բնակավայրերի հողեր նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոխադրելու առաջարկությանը:
2. Դիմել ՀՀ Լոռու մարզպետարան՝ հողերի նպատակային նշանակության փոփոխության առաջարկությունը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու համար:

| | Կողմ -10 | Դեմ -0 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|---|
| ԲԱՂՈՅԱՆ ՄԱՐՏԻԿ | [signature] | | |
| ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ | [signature] | | |
| ԳԶԻՐԱՆՑ ԷԼԼԱ | [signature] | | |
| ԴԻԼԲԱՐՅԱՆ ԷԴԻԿ | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | | | |
| ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ | | | |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԶԱՎԵՆ | | | |
| ՍՈԼՈՅԱՆ ԱՐԱՐԱՏ | | | |
| ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ | | | |
| ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Մեծավան, (093)024287, metsavan.lori@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 62-Ա

## «ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» (ՀՀՏԶ) ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Մեծավան համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Տալ համաձայնություն վերահաստատել Մեծավան համայնքի անդամակցությունը «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» (ՀՀՏԶ) նախաձեռնությանը:

| | Կողմ -10 | Դեմ -0 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|---|
| ԲԱՂՈՅԱՆ ՄԱՐՏԻԿ | | | |
| ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ | | | |
| ԳԶԻՐԱՆՑ ԷԼԼԱ | | | |
| ԴԻԼԲԱՐՅԱՆ ԷԴԻԿ | | | |
| ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | | | |
| ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ | | | |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԶԱՎԵՆ | | | |
| ՍՈԼՈՅԱՆ ԱՐԱՐԱՏ | | | |
| ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ | | | |
| ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Մեծավան, (093)024287, metsavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 63-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ և 68-րդ հոդվածներով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգով,հաշվի առնելով Մեծավան համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը՝ Մեծավան համայնքի ավագանին

### ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն՝ Մեծավան համայնքի վարչական սահմաններում գտնվող Մեծավան համայնք գյուղ Պաղաղբյուրում 06-090-0104-0003 ծածկագրով 5,01334հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը 764650 ՀՀ դրամ մեկնարկային գնով, աճուրդ վաճառքի ներկայացնելու:
2.Մրցույթի մասնակցության վճարը 5000 ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով՝ 382325 ՀՀ դրամ և նվազագույն քայլի չափը մեկնարկային գնի 5 տոկոսի չափով՝ 38233 ՀՀ դրամ:
3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդ վաճառքի հայտարարության հրապարակային ծանուցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

| | Կողմ -10 | Դեմ -0 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|---|
| ԲԱՂՈՅԱՆ ՄԱՐՏԻԿ | | | |
| ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ | | | |
| ԳԶԻՐՅԱՆՑ ԷԼԼԱ | | | |
| ԴԻԼԲԱՐՅԱՆ ԷԴԻԿ | | | |
| ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | | | |
| ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ | | | |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԶԱՎԵՆ | | | |
| ՍՈԼՈՅԱՆ ԱՐԱՐԱՏ | | | |
| ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ | | | |
| ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Մեծավան, (093)024287, metsavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 64-Ա

### «ՄԵԾԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 56-Ա ՈՐՈՇՄԱՆ ԹԻՎ 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդված 1-ին մասով՝ Մեծավան համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է.**

1. «Մեծավանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» 2019 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 56-Ա որոշման N2 հավելվածում կատարել փոփոխություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| | Կողմ -10 | Դեմ -0 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|---|
| ԲԱՂՈՅԱՆ ՄԱՐՏԻԿ | | | |
| ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ | | | |
| ԳԶԻՐԱՆՑ ԷԼԼԱ | | | |
| ԴԻԼԲԱՐՅԱՆ ԷԴԻԿ | | | |
| ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | | | |

| | | | |
|---|---|---|---|
| ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ | | | |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՋԱՎԵՆ | | | |
| ՍՈԼՈՅԱՆ ԱՐԱՐԱՏ | | | |
| ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ | | | |
| ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Մեծավան, (093)024287, metsavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 65-Ա

### <<ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆԻ <<ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ>> ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> 2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 58-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդված 1-ին մասով՝ Մեծավան համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է.**

1. «ՀՀ Լոռու մարզի Մեծավանի «Մշակույթի կենտրոն» բյուջետային հիմնարկի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» 2019 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 58-Ա որոշման հավելվածումկատարելփոփոխություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| | Կողմ -10 | Դեմ -0 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|---|
| ԲԱՂՈՅԱՆ ՄԱՐՏԻԿ | | | |
| ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ | | | |
| ԳԶԻՐԱՆՑ ԷԼԼԱ | | | |
| ԴԻԼԲԱՐՅԱՆ ԷԴԻԿ | | | |
| ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | | | |
| ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ | | | |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԶԱՎԵՆ | | | |
| ՍՈԼՈՅԱՆ ԱՐԱՐԱՏ | | | |
| ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ | | | |
| ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Մեծավան, (093)024287, metsavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 66-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ՄԵԾԱՎԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՇԵՆՔԻՆ ՄՈՏԻԿ ԳՏՆՎՈՂ ԾԱՌԵՐԸ ԿՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, 2021թվականի սեպտեմբերի 8-ին կազմված հանձնաժողովի թիվ 1 արձանագրությունով, հիմք ընդունելով Մեծավանի ԱԿ ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ-ի թիվ 31 գրությունը՝ Մեծավան համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է.**

1. Թույլատրել կտրել «Մեծավանի առողջության կենտրոնի» շենքին մոտիկ գտնվող ծառերը (եղևնիներ), քանի որ փշերը լցվում են տանիքի ջրահեռացման համակարգ, խցանում այն, ինչի արդյունքում անձրևների ժամանակ ջուրը լցվում է շենք և փչացնում այն:
2. Փայտանյութը պահեստավորել՝ սոցիալապես անապահով ընտանիքներին որպես վ առելիք հատկացնելու նպատակով:

| | Կողմ -10 | Դեմ -0 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|---|
| ԲԱՂՈՅԱՆ ՄԱՐՏԻԿ | | | |
| ԲԵԶՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ | | | |
| ԳԶԻՐԱՆՑ ԷԼԼԱ | | | |
| ԴԻԼԲԱՐՅԱՆ ԷԴԻԿ | | | |
| ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | | | |
| ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ | | | |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԶԱՎԵՆ | | | |
| ՍՈԼՈՅԱՆ ԱՐԱՐԱՏ | | | |
| ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ | | | |
| ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Մեծավան, (093)024287, metsavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 67-Ա

## ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 33. հոդվածի 4-րդ կետով՝ Մեծավան համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է.**

Մեծավան համայնքի 2021թվականի բյուջեի պահուստային ֆոնդի 4891 հոդվածի 11. 1. 2. ծրագրից կառավարման ապարատի 4111 հոդվածի 01. 1. 1 ծրագրին հատկացնել 750,0/յոթ հարյուր հիսուն / հազար ՀՀ դրամ, Մշակույթի կենտրոնի 4111 հոդվածի 8. 2. 3 ծրագրին՝ 90,0/իննսուն/ հազար ՀՀ դրամ:

| | Կողմ -10 | Դեմ -0 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|---|
| ԲԱՂՈՅԱՆ ՄԱՐՏԻԿ | | | |
| ԲԵՋՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ | | | |
| ԳԶԻՐԱՆՑ ԷԼԼԱ | | | |
| ԴԻԼԲԱՐՅԱՆ ԷԴԻԿ | | | |
| ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | | | |
| ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ | | | |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԶԱՎԵՆ | | | |
| ՍՈԼՈՅԱՆ ԱՐԱՐԱՏ | | | |
| ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ | | | |
| ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Մեծավան, (093)024287, metsavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 68-Ա

## «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊՈԱԿ-ԻՆ ԽՆԴՐԱՆՔՈՎ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, հիմք ընդունելով այն փաստը, որ Մեծավան համայնքի Մեծավան գյուղի հյուս*-արևելյան հատվածից անտառամերձ գոտուց մոտ 2հա տարածքը անտառտնտեսության գործունեության համար պիտանի չի՝ Մեծավան համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է.**

1. Խնդրանքով դիմել «Հայանտառ» ՊՈԱԿ-ին Մեծավան համայնքի Մեծավան գյուղի հյուսիս-արևելյան հատվածի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից 2հա տարածքը փոխարինել համայնքի հյուսիսային տարածքում գտնվող «Հայանտառ» ՊՈԱԿ-ին պատկանող հողմասի հետ, որը անտառտնտեսության գործունեության համար պիտանի չի, սակայն նպաստավոր է հանգստյան գոտի ստեղծելու համար:

| | Կողմ -10 | Դեմ -0 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|---|
| ԲԱՂՈՅԱՆ ՄԱՐՏԻԿ | | | |
| ԲԵԶՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ | | | |
| ԳԶԻՐԱՆՑ ԷԼԼԱ | | | |
| ԴԻԼԲԱՐՅԱՆ ԷԴԻԿ | | | |
| ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ | | | |
| ՄԱՂԱՔՅԱՆ ՄԱՐՏԻՆ | | | |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԶԱՎԵՆ | | | |
| ՍՈԼՈՅԱՆ ԱՐԱՐԱՏ | | | |
| ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ | | | |
| ՓԵԹԱԿՉՅԱՆ ՎԱՀԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ